

## ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 03

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ  
19.11.2014թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 58 (հիսունուր) անդամից ներկա էին 45-ը (քառասունհինգ):

### ՕՐԱԿԱՐԳ՝

1. Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի 2013-2014 ուստարվա հաշվետվություն:

Ձեկ.՝ բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի  
դեկան Ա. Գրիգորյան

2. Տիգմաթ ֆակուլտետի 2013-2014 ուստարվա հաշվետվություն:

Ձեկ.՝ ֆիզմաթ ֆակուլտետի դեկան Մ. Մարգարյան

3. Ընթացիկ հարցեր:

3.1 ԳՊՄԻ-ի 80-ամյակի կապակցությամբ բուհի նախկին շրջանավարտներ Լևոն Արսենի Ջուլֆալակյանին, Մնացական Ֆրունզեի Իսկանդարյանին, Իսրայել Նիկոլայի Միլիտոսյանին և Վարազդատ Մկրտիչի Ավոյանին ԳՊՄԻ-ի «Ոսկե մեդալով» պարգևատրելու մասին:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

3.2 Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ֆ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Սամվել Հովհաննեսի Սարգսյանին ԳՊՄԻ-ի «Ոսկե մեդալով» և դրամական պարգևով պարգևատրելու մասին:

Ռեկտոր Վ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 45 անդամ. կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.ԼՍԵՑԻՆ.- Ա. Գրիգորյանի զեկուցումը բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի 2013-2014 ուստարվա գործունեության մասին /Հաշվետվությունը՝ կից:/:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Ռեկտոր Վ. Գրիգորյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը:

Վ. Գրիգորյանը, դիմելով Ա. Գրիգորյանին, նկատեց, որ վերջին տարիներին բնագիտական առարկաների գծով նվազել է դիմորդների քանակը: Նրան հետաքրքրում էր, թե կոնկրետ ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվել՝ ուղղված դիմորդների քանակի ավելացմանը:

Այդ հարցում Ա. Գրիգորյանը կիսեց Վ. Գրիգորյանի մտահոգությունը և նշեց, որ իրենք ձեռնարկել են կոնկրետ քայլեր՝ դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար: Հատկապես նշեց բնագիտաաշխարհագրական ֆակուլտետում կազմակերպված ճանաչողական հանդիպումների շարքը Շիրակի մարզի ավագ դպրոցների և վարժարանների ավարտական դասարանների աշակերտների համար:

Ս. Ալեքսանյանի խոսքերով՝ ֆակուլտետի աշխատանքները կազմակերպված են բարձր մակարդակով, և այդ հարցում որոշիչ է ինչպես դեկանի, այնպես էլ աշխատակիցների պատասխանատվության բարձր մակարդակը: Բացի դրանից, կարևորեց բուհի ու աշխատաշուկայի միջև կապի հաստատումը, որը հիմք կծառայի դիմորդների կողմնորոշման համար: Հաշվի առնելով Ա. Գրիգորյանի նվիրվածությունը ֆակուլտետի գործունեությանը՝ առաջարկեց հաշվետու ժամանակահատվածում նրա կատարած աշխատանքը գնահատել բավարար:

Ա. Ֆարմանյանն ընդգծեց, որ վերջին 3 տարիներին բուհում կատարված վերլուծությունների արդյունքների համաձայն՝ բնագիտաաշխարհագրական ֆակուլտետն ինստիտուտի առաջատար ֆակուլտետներից է և՛ բովանդակային, և՛ կազմակերպչական առումով: Մասնավորաբար, ուսումնասիրելով ուսանողների մուտքի ու ելքի պայմանները՝ ակնհայտ է եղել պրոֆետորադասախոսական կազմի ինչպես մասնագիտական, այնպես էլ հոգատար, սրտացավ

աշխատանքը: Ըստ նրա՝ գովելի է այն իրողությունը, որ ինստիտուտում իրականացվող ցանկացած նախաձեռնության դեպքում ֆակուլտետի ամբիոնների վարիչներն ամենայն պատասխանատվությամբ պատրաստ են աջակցելու աշխատանքին և, իհարկե, նման աշխատանքային պատասխանատվության մեջ մեծ է Ա. Գրիգորյանի ներդրումը: Նա նաև ընդգծեց կադրերի երիտասարդացման խթանման ուղղությամբ քաղաքականության վարումը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի ղեկանի 2013-2014 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար, և որոշման նախագիծը, արված առաջարկություններով հանդերձ, ընդունել հիմք:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 45 անդամ. կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**2.ԼՍԵՑԻՆ.-** Մ. Մարգարյանի գեկուցումը ֆիզմաթ ֆակուլտետի 2013-2014 ուստարվա գործունեության մասին /Հաշվետվությունը՝ կից:/:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Ռեկտոր Վ. Գրիգորյանը, Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ա. Մանուկյանը:

Ա. Գրիգորյանն անդրադարձավ մի քանի ելակետային հարցերի.

1. Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի, տնտեսագիտության ամբիոնների երիտասարդ կադրերի գիտական աստիճան, կոչում ձեռքբերելու հարցին, 2. Ֆիզմաթ ֆակուլտետի անվանափոխման հարցին՝ առաջարկված ֆիզմաթ ֆակուլտետի ղեկանի կողմից:

Ս. Ալեքսանյանը խնդիրներից հիշատակեց նոր կադրերի պատրաստումն ու դիմորդների նվազումը: Ինչ վերաբերում է ֆակուլտետի կառավարմանը, ապա, նրա գնահատմամբ, այն գոհացուցիչ է և առաջարկեց ֆակուլտետի ղեկանի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում գնահատել բավարար՝ հաշվի

առնելով հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները:

Ա. Ֆարմանյանի համոզմամբ՝ ֆակուլտետն ունի հմուտ ղեկավար և նրա կառավարման ներքո աշխատում են երկար տարիների փորձ ունեցող ամբիոններ: Նա ևս ընդգծեց ֆիզմաթ ֆակուլտետում գործող մասնագիտությունների ուղղությամբ նոր կադրերի պատրաստումը և նկատեց, որ այդ հարցում վիճակը գոհացուցիչ է բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնում, որը համալրված է գիտական աստիճան, կոչում ունեցող մասնագետներով: Ավելին, ամբիոնի ղեկավար Ս. Սարգսանի կառուցողական աշխատանքի շնորհիվ Գյումրիի դպրոցներում, վարժարաններում աշխատում են մի շարք ֆիզմաթ գիտությունների թեկնածուներ, ովքեր հայտնի են ոչ միայն մարզում, այլև ողջ հանրապետությունում: Ամբիոնի աշխատակիցների գործունեության արդյունքում հրատարակված շուրջ 40 գիտական աշխատանքները բարձրացնում են բուհի վարկանիշը գիտության ոլորտում: Ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների, ինչպես նաև ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնները նույնպես լուրջ են մոտենում աշխատանքին: Վերջին ստուգայցի տվյալներով՝ ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում պահանջված փաստաթղթային բազան եղել է ապահովված: Անդրադառնալով տնտեսագիտության ամբիոնի խնդիրներին՝ նշեց դասախոսների առարկայական ծանրաբեռնվածությունը:

Ա. Մանուկյանը նշեց, որ ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը համալրված է գիտական աստիճան, կոչում ունեցող մասնագետներով և հետ չի մնում ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնից: Նա հետևողական է երիտասարդ կադրերի պատրաստման հարցում:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 1.Ֆիզմաթ ֆակուլտետի ղեկանի 2013-2014 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար:

2.Որոշման նախագիծը, արված առաջարկություններով հանդերձ, ընդունել հիմք, և վերջինիս 7-րդ կետի համաձայն՝ ֆիզմաթ ֆակուլտետը վերանվանել ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետի:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 45 անդամ. կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**3.ԼՍԵՑԻՆ.-** Ընթացիկ հարցեր:

**3.1ԼՍԵՑԻՆ.-** ԳՊՄԻ-ի 80-ամյակի կապակցությամբ բուհի նախկին շրջանավարտներ Լևոն Արսենի Ջուլֆալակյանին, Մնացական Ֆրունզեի Իսկանդարյանին, Իսրայել Նիկոլայի Միլիտոսյանին և Վարազդատ Մկրտիչի Ավոյանին ԳՊՄԻ-ի «Ոսկե մեդալով» պարգևատրելու մասին (Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան):

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության /ՆԶՊ/ ֆակուլտետի ղեկան Ա. Խաչատրյանը, ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր Ա. Մաթևոսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 1.Սպորտի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար ինստիտուտի նախկին շրջանավարտներ Լևոն Արսենի Ջուլֆալակյանին, Մնացական Ֆրունզեի Իսկանդարյանին և Իսրայել Նիկոլայի Միլիտոսյանին պարգևատրել ԳՊՄԻ-ի «Ոսկե մեդալով»:

2.Հասարական-քաղաքական ոլորտներում ունեցած նշանակալի ներդրման համար ինստիտուտի նախկին շրջանավարտ Վարազդատ Մկրտիչի Ավոյանին պարգևատրել ԳՊՄԻ-ի «Ոսկե մեդալով»:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 45 անդամ. կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**3.2ԼՍԵՑԻՆ.-** Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ֆ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Սամվել Հովհաննեսի Սարգսյանին ԳՊՄԻ-ի «Ոսկե մեդալով» և դրամական պարգևով պարգևատրելու մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Արժևորելով գիտության բնագավառում բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ֆ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Սամվել Հովհաննեսի Սարգսյանի ունեցած ներդրումը՝ նրան պարգևատրել ԳՊՄԻ-ի «Ոսկե մեդալով» և դրամական պարգևով՝ 405 000 ՀՀ դրամի չափով:  
**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 45 անդամ. կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝

Վ. Գրիգորյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Թ. Խաչատրյան